

ԵՂՎԱՐԴ ԱՂԱՅԱՆ ՍԵԾ ԼԵՉՎԱԲԱՆԸ

Այս տարի գարնանը լրացավ ՀՀ ԳԱՍ ակադեմիկոս Էդվարդ Բագրատի Աղայանի ծննդյան 90-տարին:

Արդեն տասներկու տարի է անցել, որ մեծ լեզվաբանը մեզ հետ չէ: Սակայն մեզ հետ է նրա հիշատակը, մեզ հետ են և մեր սեղանին են նրա գիտական վաստակի նմուշները՝ գրքերը, գիտական հոդվածները, գրախոսությունները, գրքերի առաջաբանները: Մեր հիշողության մեջ են անվանի դասախոսի, մեծ մտավորականի և քաղաքացու լսարանում, գիտական դահլիճներում, պաշտոնական սրահներում, սովորական աշխատասենյակում հնչեցրած խոսքի մանրամասները:

Ուղիղ հինգ տարի առաջ, խոշոր գիտնականի ծննդյան 85-ամյակի առիթով «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում մեր հարգանքի և երախտիքի տուրքն ենք մատուցել՝ կարծելով, որ այդ տուրքը նրան ճանաչողներին, նրա գիտությանը գործացածներին և շատերին է եղել:

Այսօր ևս հարկ ենք համարում հիշել ականավոր լեզվաբանին մեծն Հ. Աճառյանի սանին, մեր մյուս մեծերի գործընկերոջը, իրենից հետո եկողներիս ուսուցչին:

Է. Աղայանի կյանքը և գիտական գործունեությունը գրեթե ամեն մի մտավորականի, հայ մարդու և շատ օտարների են հայտնի: Այդ մասին ամեն ոք կարող է տեղեկանալ տարբեր բնույթի գրքերից, հանրագիտարաններից, մարդկանց հուշերից:

Մենք ուզում ենք շեշտել այն հանգամանքը, որ ինչքան են գնում տարիները, նույնքան ավելի պարզ ու հստակ, ավելի հասկանալի են դառնում հայ լեզվաբանության անխոց, եռանդուն մշակի վաստակն

ու հունձը: Աղայանի գիտական գործունեությունը եղել է մի տեսակ խիզախում: Ընդամենը 28 տարեկանում դարձել է գիտության թեկնածու, իսկ 32-ում գիտության դոկտոր: Գրել է բազմաթիվ գրքեր, դասագրքեր, կազմել բառարան, խմբագրել և հրատարակել ոչ միայն իր ուսուցչի, այլև շատ ուրիշ գիտնականների աշխատություններ: Տասնամյակներ շարունակ դասավանդել է մեր հանրապետության տարբեր բուհերում, մշտապես երևանի պետական համալսարանում: Եղել է պետության և գիտական հաստատությունների պատշաճ ուշադրության կենտրոնում:

Էդ. Աղայանը և լեզվաբան էր, և բանասեր: Հայերենագիտությունը նրա գործի միջնաբերդն էր, իսկ պարսից և առհասարակ արևելյան գրականության պատմության դրվագներին, լատիներենի քերականությանը, ընդհանուր լեզվաբանությանը և տերմինագիտությանը, տոմարագիտությանը վերաբերող գրքերը այդ միջնաբերդին հարող ամրակուռ պարիսպները:

Նա մեր օրերի այն հազվադեպ բանասերներից էր, որ մանրագին հետևողականությամբ ձեռնամուխ է եղել լուծելու նախամաշտոյան հայ գրականության, մենրոայան աբուբեթի խնդիրները, պարզաբանելու հայոց տոմարի ու տոմարագիտության առանցքային հարցերը:

Նա երախտագետ սանն էր Հ. Աճառյանի և մնաց նրա հոգևոր աշակերտը: Եվ պատահական չէ, որ Աղայան ազգանվամբ ուշիմ ուսանողին Աճառյանը շատ է ուզեցել իր ասպիրանտը տեսնել: Երևի Աճառյանը հոգեպես որոնել է իր գործի մնացած մասը լույս աշխարհ բերողին՝ իր ձեռագիր

գրեցին ու բառարանները հրատարակելու ձեռնարկողին, իրենից հետո, ինչքան հնարավոր է: Աղայանն այդ գործում ևս եղավ իր ուսուցչին նմիված:

Մեծ մտավորական էր էդ. Աղայանը: Նա բազմափորձ գիտնական էր, հասարակական հմուտ գործիչ, գիտության եռանդուն կազմակերպիչ՝ նախարարության աշխատող, պրոռեկտոր, ամբիոնի վարիչ, գիտական ղեկավար:

Ամեն մի լեզու ամենից առաջ բառերի աշխարհ է: Հարուստ է այն լեզուն, որ ունի հարուստ բառարանագրություն: Մեծ է Աղայանի վաստակը հայոց լեզվի բառարան ստեղծելու գործում: Նրա գլուխգործոցը թերևս «Արդի հայերենի բացատրական բառարան» է, մի կոթողային աշխատություն, որ նոր մակարդակով է հայոց լեզվի բառազանձը մեկնաբանում: Նրանում ամբարված է 135 հազար բառային միավոր: Դրանցից 15 հազարն առաջին անգամ այս բառարանում է գրանցված: Նրանում տեղ են գտել նաև 11 հազար դարձվածային միավորներ: Հեղինակը հանդես է բերել բառային միավորների ընտրության մեծ հմտություն, բառի իմաստների լիարժեք, մեկը մյուսից բխող առանձնացման բժախմրդություն, տերմինների և նման անվանումների բացատրության բացառիկ կարողություն:

Աղայանը գիտակ էր պարսկալեզու արևելքի մշակույթին, մասնավորապես գրականությանը: Նա հայերենագետ էր մի տեսակ բանաստեղծական հախուռն, վեհ խառնվածքով: Բազմիցս առնչվել էր եվրոպական և արևելյան գրականության նմուշներին, կատարել էր «Հազար ու մեկ գիշերների» թարգմանությունը, «Կամելիազարդ տիկինը» պոետիկ վեպի արևելահայերեն փոխադրումը: Պարսից և այլ ժողովուրդների առաջվել աչքի ընկնող բանաստեղծների գիտեր բնագրով ու բերանացի:

Թերևս չկա հայերենագիտության որևէ բնագավառ, փոքրիշատ նկատելի ճյուղ, որտեղ իր ծանրակշիռ, հաճախ ուղեծրող

խոսքն ասած չլինի մեծանուն լեզվաբանը: Աղայանի ուսումնասիրությունները ընդգրկում են հայոց լեզվի պատմությունը, բարբառագիտությունը, հայ լեզվաբանության պատմությունը: Հայ լեզվաբանական մտքի զարգացման պատմության կարևոր ուղեմիջ է եղել Աղայանի երկհատոր աշխատությունը:

Մեծ է Աղայանի վաստակը հայերենի համեմատական ուսումնասիրության բնագավառում: Հայ ժողովրդի անցյալի վկայություններից թերևս ամենահավաստին և վստահելին մնում է նրա լեզուն: Մեր լեզուն իր մեջ ծրարել է մեր մտածողության, հոգեբանության, ազգային նիստուկացի բազուն շերտեր: Ուստի բառի և նրա իմաստի ստույգ վերիցմունքն ու մեկնաբանությունը դառնում են լավագույն միջոց մեր ժողովրդի վաղնջական անցյալի ճանաչման համար: Մեծանուն համեմատաբանը մեզ է թողել հայերեն բառերի քննության և ստուգաբանության բազուն օրինակներ, որոնցով ևս տեղեկանում ենք մեր անցյալին:

Հայ լեզվաբանության մեջ կա մի բնագավառ, որտեղ Աղայանը բացառիկ վաստակ է ունեցել: Դա լեզվաբանության ներածություն դասագրքի ստեղծումն է: Տասնամյակներ շարունակ մեր հանրապետությունում բուհերն այդ դասագրքով են աշխատում, ընդ որում ոչ միայն հայկական, այլև ռուսական կրթությամբ բաժիններում: Գիրքը վեց անգամ վերահրատարակվել է, թարգմանվել ռուսերեն լեզվով:

Էդ. Աղայանը՝ մեծ երախտավորը, բազում օրեր ու երջանիկ պահեր է ապրել, բազում գրքեր է գրել ի շահ իր ժողովրդի մտավոր զարգացման ու առաջընթացի: Նա մեծ թվով աշակերտներ ու լեզվաբան սաններ է ունեցել, որոնք երախտիքով են բացում իրենց շուրթերը նրա անունը և գիտական ժառանգությունը մտաբերելիս:

Հետնորդներս համար ուսանելի է մեծերի ոչ միայն գործը, այլև կյանքը:

Վ. Գ. ՀԱՄԱՐԶՈՒՄՅԱՆ